

Հաստատված է «Ակտինա Կապիտալ»  
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության  
Արտահերթ Ընդհանուր Ժողովի Նիստի  
Թիվ 2026/03/23-1 Արձանագրությամբ  
Տնօրենի ժ/պ՝ Սերգեյ Գալոյան



ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ  
ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ»

| Խմբագրության համար | Հաստատման ամսաթիվ | Ուժի մեջ մտնելու ամսաթիվ |
|--------------------|-------------------|--------------------------|
| 1.2                | 23.03.2026        | 23.03.2026               |

2026Թ  
ԵՐԵՎԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                  |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ՆՊԱՏԱԿԸ.....                                                                                                                     | 3  |
| ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ.....                                                                                                           | 3  |
| ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....                                                                                                          | 3  |
| ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....                                                                                                            | 4  |
| 1. ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....                                                                                             | 6  |
| 2. ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ.....                               | 6  |
| Հաճախորդի նույնականացում տեսաձայնային հեռահաղորդակցման միջոցների կիրառմամբ..                                                     | 8  |
| Հաճախորդի ռիսկի դասակարգում.....                                                                                                 | 10 |
| 3. ԳԼՈՒԽ 3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ.....                                                 | 12 |
| 4. ԳԼՈՒԽ 4. ՈՒՄԿԵՐԻ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ.....                                                                                            | 12 |
| 5. ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....                                                                                          | 14 |
| 6. ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԱՐՄԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ.....                                                        | 16 |
| 7. ԳԼՈՒԽ 7. ԿԱՄԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳԱՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....                                   | 17 |
| 8. ԳԼՈՒԽ 8. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՅՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....                                                         | 18 |
| 9. ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՅՈՒՄ, ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՅՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՅՈՒՄ..... | 19 |
| 10. ԳԼՈՒԽ 10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՆՏՐԱԳԵՆՏԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....                            | 20 |
| 11. ԳԼՈՒԽ 11. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ.....                                            | 20 |
| 12. ԳԼՈՒԽ 12. ՓԼ/ԱՑ/ԶՈԶ ՏՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.....                                                   | 21 |
| 13. ԳԼՈՒԽ 13. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ.....                                                            | 21 |
| 14. ԳԼՈՒԽ 14. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....                                                                                           | 22 |
| 15. ԳԼՈՒԽ 15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....                                                                                                 | 22 |
| Հավելված թիվ 1 .....                                                                                                             | 24 |
| Հավելված թիվ 2 .....                                                                                                             | 32 |
| Հավելված թիվ 3 .....                                                                                                             | 36 |
| Հավելված թիվ 4 .....                                                                                                             | 42 |
| Հավելված թիվ 5 .....                                                                                                             | 62 |
| Հավելված թիվ 6 .....                                                                                                             | 84 |

|                      |     |
|----------------------|-----|
| Հավելված թիվ 7 ..... | 119 |
| Հավելված թիվ 8 ..... | 141 |
| Հավելված թիվ 9 ..... | 142 |
| Հավելված թիվ 10..... | 144 |
| Հավելված թիվ 11..... | 172 |
| Հավելված թիվ 12..... | 185 |
| Հավելված թիվ 13..... | 188 |
| Հավելված թիվ 14..... | 194 |
| Հավելված թիվ 15..... | 198 |
| Հավելված թիվ 16..... | 202 |

## ՆՊԱՏԱԿԸ

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի, միջազգային պատժամիջոցների համապատասխանության» ընթացակարգի (այսուհետ՝ «**Ընթացակարգ**») նպատակն է կանոնակարգել և սահմանել «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ «**Ընկերություն**») կողմից իրականացվող փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ «**ՓԼ/ԱՖ**»), զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման (այսուհետ՝ «**ԶՈԶՏ**») կանխարգելմանը, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների համապատասխանությանն ուղղված միջոցառումները:

Սույն Ընթացակարգով սահմանվում են ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ դեմ պայքարի ներքին հսկողության հիմնական գործառնությունները, սկզբունքները, պահանջները և իրականացման կարգը, ինչպես նաև կարգավորվում են ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված անձանց գույքի սառեցմանն առնչվող հարաբերությունները:

## ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ընթացակարգի դրույթները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր մարմինների, ղեկավարների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների վրա:

## ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք:
2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ» (հաստատված ՀՀ Կենտրոնական Բանկի (այսուհետ՝ «**ՀՀ ԿԲ**») խորհրդի 07.10.2014թ. թիվ 279-Ն որոշմամբ): (այսուհետ նաև՝ «Նվազագույն պահանջների կանոնակարգ»)
3. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույց» (հաստատված ՀՀ ԿԲ նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1/347-Ա որոշմամբ):
4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգ:
5. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման տարածման դեմ պայքարի» Քաղաքականություն:
6. «Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և շրջանցման ռիսկերի կառավարման» կանոնակարգ
7. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների ռիսկի ախորժակ
8. Ռիսկերի ռազմավարական վերլուծության իրականացման մեթոդաբանություն
9. Ներքին դիտարկումների մարմնի տարեկան ծրագիր

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Հավելված 1՝** «Հաճախորդների հետ գործարար հարաբերություն հաստատելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ (ֆիզիկական անձ)»
- Հավելված 2՝** «Հաճախորդների հետ գործարար հարաբերություն հաստատելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ (իրավաբանական անձ)»
- Հավելված 3՝** «Հաճախորդների հետ գործարար հարաբերություն հաստատելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ (ֆինանսական հաստատություն)»
- Հավելված 4՝** ««Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաթերթիկ (ֆիզիկական անձ)»
- Հավելված 5՝** ««Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաթերթիկ (իրավաբանական անձ և ԱԶ)»
- Հավելված 6՝** ««Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաթերթիկ (ֆինանսական հաստատություն)»
- Հավելված 7՝** «Հաճախորդի ռիսկի գնահատման մեթոդաբանություն»
- Հավելված 8՝** «Աշխատակիցների կողմից կասկածելի գործարքների տեղեկացման ձևաթուղթ»
- Հավելված 9՝** «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանխարգելման և պատժամիջոցների համապատասխանության շրջանակում անցկացված ուսուցման թերթիկ»
- Հավելված 10՝** «Հավելյալ պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈԻ) իրականացման կարգ»
- Հավելված 11՝** «ՆԴՄ եզրակացության ձևաթերթ»
- Հավելված 12՝** «Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր»
- Հավելված 13՝** «Հավաստիացում-նամակ միջազգային պատժամիջոցների համապատասխանության վերաբերյալ»
- Հավելված 14՝** «Հավաստիացում-նամակ ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ներքին հսկողական համակարգերի վերաբերյալ»
- Հավելված 15՝** «Հավաստիացում-նամակ տեղեկատվության բացահայտման վերաբերյալ (omnibus հաշիվների դեպքում)»
- Հավելված 16՝** «Ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ՓԼ/ԱՖ ռիսկերի տեղեկանք»

## ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Ընթացակարգում կիրառվող բոլոր հասկացությունները համապատասխանում են Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության» Քաղաքականությամբ (այսուհետ՝ «**Քաղաքականություն**») և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հասկացություններին, եթե այլ բան նախատեսված չէ կամ չի ենթադրվում սույն Ընթացակարգով:

Սույն Ընթացակարգով կիրառվող հասկացություններն են.

**Ճանաչիր Հաճախորդիդ սկզբունք (կամ «KYC»)**

Միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք, որը ենթադրում է Հաճախորդի նույնականացման և ինքնության տվյալների հավաքագրման, Հաճախորդի գործարար բնութագրի պարզաբանման, վերջինիս վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների պարբերաբար թարմացման պահանջ և կիրառվում է Հաճախորդի ու նրա կողմից կատարված գործարքների պատշաճ

Ընկերության ծրագրային ապահովում

Ընկերության կառավարման մարմիններ

Առաջնային օդակի աշխատակիցներ

Մեծ կարողություն ունեցող հաճախորդներ (High Net Worth Clients – HNWT)

Հաճախորդների նույնականացման տվյալների թղթապանակ

Հաճախորդների գրանցամատյան կամ հաշվառման համակարգ

ուսումնասիրության իրականացման համար:

Վճարովի տվյալների շտեմարան, որտեղ ներառված են ՄԱԿ, ԵՄ, ԱՄՆ ԱԱՎԳ, ՄԹ և ԶԱՌԻԱ ցանկերը, ինչպես նաև անձանց կամ ընկերությունների վերաբերյալ բացասական ազդակներ կամ տեղեկություններ:

Գործադիր ղեկավար, Ընկերության մասնակիցների ընհանուր ժողով (կամ միակ մասնակից):

Ընկերության սպասարկման, հաճախորդների հետ շփման, բիզնես բլոկի և հետգործառնական ստորաբաժնումների աշխատակիցներ: Ներառյալ ՄՍԱ կամ ՍՍ աշխատակից (Հաճախորդների սպասարկման ստորաբաժանման աշխատակից(ներ)):

Սույն Ընթացակարգի շրջանակներում Մեծ կարողություն ունեցող հաճախորդ է համարվում այն ֆիզիկական անձը, որը բավարարվում է ստորև նշված չափանիշներից թեկուզև մեկին.

1. Հաճախորդը մեկ տարվա ընթացքում համալրել է իր հաշիվը առնվազն 1,000,000 ԱՄՆ դոլարով (կամ համարժեք այլ արժույթով)՝ ներառյալ բանկային փոխանցումներ, ավանդներ կամ արժեթղթերի մուտքագրումներ: Ընդ որում նշված չափանիշը ի հայտ է գալիս հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց 1 տարի հետո՝ տարեկան թարմացման ժամանակ:
2. Հաճախորդը մեկանգամյա գործարքով համալրել է իր հաշիվը առնվազն 1,000,000 ԱՄՆ դոլարով (կամ համարժեք այլ արժույթով), կամ կատարել է նույնարժեք արժեթղթերի փոխանցում:
3. Հաճախորդը ներառված է միջազգային հեղինակավոր ֆինանսական կամ տնտեսական հրապարակումներում (օրինակ՝ *Forbes*, *Bloomberg*, *Financial Times*), որտեղ նրա կարողությունը գնահատվել է առնվազն 5,000,000 ԱՄՆ դոլար:

Ընկերության Հաճախորդների վերաբերյալ տվյալների պահպանման բազա, որտեղ տեղադրված են յուրաքանչյուր Հաճախորդի անունով առանձին բացված էլեկտրոնային թղթապանակները՝ և վերջինիս կողմից տրամադրված և/ կամ առնչվող փաստաթղթերով, պայմանագրերով ստուգումների արդյունքներով և տեսաձայնագրությամբ և լուսանկարներով:

Փաստաթուղթ կամ ծրագրային համակարգ, որը պարունակում է տեղեկատվություն յուրքանչյուր

**Մատակարար (և գործակալ)**

պահի դրությամբ Ընկերության Հաճախորդների (նույնականացման տվյալներ, ՀՊՈԻ տվյալների և ՓԼ/ԱՖ ու ՄՊ ռիսկի դաս) վերաբերյալ:

**Կոնտրագենտ**

Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր կամ ֆիզիկական անձինք, որոնք Ընկերությանը մատուցում են ծառայություններ ոչ միանգամյա հիմունքներով, ինչպիսիք են՝ հաճախորդների ներգրավման ծառայություններ (գործակալներ), հաշվապահական ծառայությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում և այլ ոլորտներում մատուցվող ծառայությունները:

Ֆինանսական հաստատություններ, որոնց հետ ընկերությունը հաստատել է կամ պատրաստվում է հաստատել գործարար հարաբերություններ և որոնք ֆինանսական ծառայություններ են մատուցում Ընկերությանը:

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույն Ընթացակարգը մշակված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ «Օրենք») դրույթների և դրա հիման վրա ընդունված ՓԼ/ԱՖ դեմ պայքարին վերաբերող ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի, ՖԱԹՖ ստանդարտների, միջազգային լավագույն փորձի և Ընկերության Քաղաքականության պահանջների համապատասխան:
- 1.2. Սույն Ընթացակարգով սահմանվող գործընթացի մաս կազմող առանձին գործառույթները Ընկերության առանձին ստորաբաժանումներում կազմակերպելու և ապահովելու համար պատասխանատվություն են կրում Ընկերության տվյալ ստորաբաժանումների ղեկավարները:
- 1.3. Ընկերությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգն ուղղված է ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ տարածման կանխարգելմանը, ինչպես նաև միջազգային պատժամիջոցներին արձագանքելու արդյունավետ գործընթացների սահմանմանը:

**ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՌԵՍՈՒՐՍԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

- 2.1. Ընկերությունն իրականացնում է պատշաճ ուսումնասիրություն, երբ
  - 2.1.1. հաստատվում է գործարար հարաբերություն,
  - 2.1.2. կասկածներ են առաջանում Հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ.
  - 2.1.3. կասկածներ են առաջանում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:
- 2.2. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը:
- 2.3. Պատշաճ ուսումնասիրության գործընթացով են անցնում.
  - 2.3.1. Ընկերության Հաճախորդները՝ անկախ վերջիններիս հետ հաստատված գործարար հարաբերության տեսակից,

- 2.3.2. իրավաբանական անձանց բաժնետերերը և/կամ իրական շահառուն, գործադիր մարմնի ղեկավարը (ղեկավարները),
  - 2.3.3. լիազորված անձինք,
  - 2.3.4. առանց լիազորագրի ստորագրության իրավունք ունեցողները,
  - 2.3.5. Ընկերության մատակարարները և գործակալները,
  - 2.3.6. Ընկերության կոնտրագենտները:
- 2.4. Ընկերությունում Հաճախորդները նույնականացվում են և՛ առերես, և՛ առանց առերես շփման՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցով՝ Հաճախորդի կողմից նախապես տրամադրված փաստաթղթերի ստուգման փուլից հետո:
- 2.5. Հաճախորդների նույնականացման և ճանաչիր հաճախորդի սկզբունքի պահանջների իրականացման ապահովման նպատակով ՍՍ աշխատակիցը նվազագույնը իրականացնում է հետևյալ քայլերը՝
- 2.5.1. Հաճախորդին է ուղարկում սույն Ընթացակարգին կից հավելվածներով (հավելված 1-ին, 2-րդ և 3-րդ) սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ ըստ հաճախորդի տեսակի,
  - 2.5.2. Հաճախորդին է տրամադրում է Ընկերության «Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաշարը (հավելված 4-րդ, 5-րդ և 6-րդ)՝ ըստ հաճախորդի տեսակի և «Իրական շահառուի վերաբերյալ» հայտարարությունը (հավելված 12-րդ), որոնք ենթակա են լրացման Հաճախորդի կողմից:
  - 2.5.3. Սույն Ընթացակարգի 2.5.1-րդ կետոն նախատեսված կարգով փաստաթղթերի ներկայացումից հետո հավաքագրում է (նախատեսված հավելված 1-ին, 2-րդ և 3-րդ) սահմանված ցանկում ներառված բոլոր փաստաթղթերը, ստուգում դրանց վավերականության ժամկետներն ու համապատասխանությունը ցանկով պահանջվող փաստաթղթերին, հավաստիանում, որ «Ճանաչիր Հաճախորդիդ» հարցաշարը պատշաճ լրացված է և ստորագրված:
- 2.6. Իրավաբանական անձանց հետ գործարար հարաբերության հաստատման ընթացքում ՍՍ աշխատակիցը իրական շահառուին պարզելու նպատակով ձեռք է բերում լիարժեք տեղեկատվություն այդ իրավաբանական անձի մասնակիցների, կառավարման մարմինների, ինչպես նաև նրանց լիազորությունների վերաբերյալ:
- 2.7. Սույն Ընթացակարգի 2. 4-րդ կետում նշված փաստաթղթերի հավաքագրումից և «Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաշարի ստորագրած տարբերակը ստանալուց հետո ՍՍ աշխատակիցն իրականացնում է տրամադրած փաստաթղթերի ստուգումներ և տվյալների համադրում:
- 2.8. Փաստաթղթերի ոչ լիարժեք կամ թերի տրամադրման դեպքում, երբ անհնար է իրականացնել Հաճախորդի նույնականացում, ՍՍ աշխատակիցը կարող է չիրականացնել պատշաճ ուսումնասիրություն և ընթացք չտալ գործարար հարաբերության հաստատմանը, քանի դեռ չեն տրամադրվել պահանջվող բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը:
- 2.9. Երբ փաստաթղթերի փաթեթն ամբողջական է ՍՍ աշխատակիցն այն Ընկերության հաղորդակցության ներքին համակարգով ուղարկում է ՆԴՄ-ին՝ ստուգումներ իրականացնելու և գործարար հարաբերության հաստատման վերաբերյալ կարծիք տրամադրելու համար:
- 2.10. ՆԴՄ-ն փաստաթղթերի վավերականության և Հաճախորդի գործարար բնութագրին տվյալների համապատասխանության համադրմանը զուգահեռ իրականացնում է Հաճախորդի անվան համընկնության ստուգում Ընկերության ծրագրային համակարգով՝ ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի, ՄԹ-ի, Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց (ՔԱՈՒԱ), ինչպես նաև Ընկերության ներքին կամ Լիազոր մարմնի կողմից տրամադրված ցանկերի հետ: Համընկնումների և բացասական տեղեկությունների բացակայության դեպքում Հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման գործընթացը շարունակվում է:
- 2.11. Եթե առկա է համընկնում վերոնշյալ ցանկերի հետ, ապա Հաճախորդի հետ հետագա



գործարար հարաբերության/գործարքի հաստատումը պահանջում է ՆԴՄ հաստատումը: ՆԴՄ-ն կարող է պահանջել հավելյալ փաստաթղթեր կամ տեղեկություններ, եթե նախապես ներկայացրած փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ բացառել կամ հաստատել համընկնումը, այդ թվում՝ աշխատանքային գրքույկից քաղվածք, դատվածություն չունենալու մասին տեղեկանք, ճանաչում ունեցող ֆինանսական հաստատությունից բարի համբավի մասին տեղեկանք-նամակ (good standing letter) և այլ փաստաթղթեր՝ հիմք ընդունելով իրավիճակային անհրաժեշտությունը:

#### **Հաճախորդի նույնականացում տեսաձայնային հեռահաղորդակցման միջոցների կիրառմամբ**

- 2.12. Սույն ենթագլխի շրջանակներում կիրառվող հասկացություններն են.
- 2.12.1. **Գաղտնագրված հարթակ**՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոց, որն ապահովում է տվյալների գաղտնիություն մինչև ստացողի կողմից տվյալներին հասանելիությունը: ՄՍ աշխատակիցների կողմից կարող են օգտագործվել Google Meet, Microsoft Teams, Zoom և համանման այլ հարթակները:
- 2.13. Հաճախորդի՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացման գործընթացի փուլն իրենից ներկայացնում է տեսազանգի միջոցով (գաղտնագրված հարթակի միջոցով) հաղորդակցումը, որի ընթացքում ՄՍ աշխատակիցը, հաճախորդի հետ հարց ու պատասխանի միջոցով, հավաստիանում է «Ճանաչիր Հաճախորդիդ» հարցաթերթում լրացված տեղեկատվության իսկության մեջ և իրականացնում է հեռավար նույնականացում՝ պահպանելով տեսաձայնագրությունը Հաճախորդի փաստաթղթերի թղթապանակում:
- 2.14. Հաճախորդի տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացումը կարող է իրականացվել միայն Ընկերության ՄՍ աշխատակիցների կողմից, որոնք առնչվածն պետք է տեղեկացված լինեն տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացման միջոցով ստուգվող փաստաթղթերի առանձնահատկություններին, հաճախ հանդիպող կեղծարարության հնարավորություններին, փողերի լվացման դեմ պայքարի և տվյալների պաշտպանության համապատասխան ընթացակարգերին, Քաղաքականությանը և Օրենքին, ինչպես նաև սույն Ընթացակարգով սահմանված պահանջներին:
- 2.15. Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացման գործընթացի ընթացքում աշխատակիցները պետք է տեղակայվեն սահմանափակ մուտքով առանձնացված տարածքներում:
- 2.16. Տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացման գործընթացում ինքնությունը հաստատելու նպատակով կարող են օգտագործվել միայն այնպիսի անվտանգության հատկանիշներով ունեցող անձը հաստատող փաստաթղթեր, որոնք բավականաչափ ապահովված են կեղծվելուց, հստակ ճանաչելի են և, հետևաբար, ստուգելի են ինչպես տեսողականորեն սպիտակ լույսի ներքո, այնպես էլ պատկերի փոխանցման հասանելի տեխնոլոգիաների միջոցով:
- 2.17. Սույն Ընթացակարգի 2.1-րդ ենթագլխով ապատեսված բավարար տեղեկատվությունը ստանալուց հետո ՄՍ աշխատակիցը հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին տրամադրում է գաղտնագրված հարթակում նախատեսված տեսազանգի հրավեր՝ հաճախորդի նույնականացման նպատակով:
- 2.18. Տեսազանգի հրավերին կից ՄՍ աշխատակիցը Հաճախորդին տրամադրում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք Հաճախորդը պարտավոր է ներկայացնել տեսազանգի ընթացքում, մասնավորապես՝ անձը հաստատող փաստաթուղթ և ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:
- 2.19. **Ֆիզիկական անձ Հաճախորդների հետ տեսաձայնային հեռահաղորդակցության ընթացքում ՄՍ աշխատակիցը՝**

- 2.19.1. Ստանում է հաճախորդի համաձայնությունը նույնականացման ողջ գործընթացին, դրա տեսանկարահանմանը և ձայնագրմանը, ինչպես նաև նրա և անձը հաստատող փաստաթղթի նկարների ստացմանը:
  - 2.19.2. Հավաստիանում է Հաճախորդի կենսունակության և նույնականացման տվյալների իսկության մեջ, որի համար.
  - 2.19.3. Պահանջում է Հաճախորդից ներկայացնել վերջինիս ամբողջական Ա. Ա. Հ-ն, ծննդյան տարեթիվը՝ զուգահեռաբար համադրում այն «Ճանաչիր քո հախախորդին» հարցաթերթիկում լրացված տվյալների հետ:
  - 2.19.4. Հաճախորդից պահանջում է վերահաստատել գործարար հարաբերություն հաստատելու և/կամ գործարքի իրականացման վերջինիս մտադրությունը:
  - 2.19.5. Պահանջում է անձը հաստատող փաստաթուղթը ցուցադրել այնպես, որ տեսանելի լինի և հնարավոր լինել միաժամանակ լուսանկարել անձը հաստատող փաստաթուղթը ու ֆիզիկական անձի դիմատվյալները: Զուգահեռաբար ստուգում է նույնականացվող անձը հաստատող փաստաթղթի անվնաս լինելու փաստը և համոզվի, որ այն չի ենթարկվել ձևախեղման:
  - 2.19.6. ՆԴՄ համապատասխան պահանջի առկայության դեպքում իրականացնում է պատշաճ ուսումնասիրության ընթացքում չպարզաբանված հարցերի քննարկում և գրառում, անհրաժեշտության դեպքում՝ «Ճանաչիր քո հախախորդին» հարցաթերթիկի խմբագրում:
- 2.20. Իրավաբանական անձ Հաճախորդի տեսազանգի ընթացքում սպասարկման օդակի պատասխանատու աշխատակիցը**
- 2.20.1. Ստանում է հաճախորդի համաձայնությունը նույնականացման ողջ գործընթացին, դրա տեսանկարահանմանը և ձայնագրմանը, ինչպես նաև նրա և անձը հաստատող փաստաթղթի նկարների ստացմանը:
  - 2.20.2. Գաղտնագրված հարթակով տեսակապ է հաստատում իրավաբանական անձ Հաճախորդի գլխավոր գործադիր մարմնի (տնօրենի) հետ:
  - 2.20.3. Հավաստիանում է իրավաբանական անձի նույնականացման տվյալների հավաստիության մեջ, համադրում «Ճանաչիր քո հախախորդին» հարցաթերթիկում լրացված տվյալների հետ:
  - 2.20.4. Հաճախորդից պահանջում է վերահաստատել գործարար հարաբերություն հաստատելու և/կամ գործարքի իրականացման վերջինիս մտադրությունը,
  - 2.20.5. Ընկերության տնօրենից պահանջում է անձը հաստատող փաստաթուղթը ցուցադրել այնպես, որ տեսանելի լինի և հնարավոր լինել միաժամանակ լուսանկարել և՛ անձը հաստատող փաստաթուղթը, և՛ ֆիզիկական անձի դիմատվյալները: Զուգահեռաբար ստուգում է նույնականացվող անձը հաստատող փաստաթղթի անվնաս լինելու փաստը և համոզվի, որ այն չի ենթարկվել ձևախեղման:
  - 2.20.6. ՆԴՄ պահանջով իրականացնում է պատշաճ ուսումնասիրության ընթացքում չպարզաբանված հարցերի քննարկում և գրառում (առկայության դեպքում), անհրաժեշտության դեպքում «Ճանաչիր քո հախախորդին» հարցաթերթիկի խմբագրում:
- 2.21. Վերահսկվող ֆինանսական հաստատությունների պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում տեսազանգ չի իրականացվում տվյալ հաստատության գործադիր մարմնի ղեկավարի հետ՝ հիմք ընդունելով վերջիններիս նկատմամբ վերահսկողությունը, բացառությամբ, եթե ՆԴՄ կարծիքով առկա են պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունների իսկության վերաբերյալ կասկածներ: Այդ դեպքում տեսազանգն իրականացվում է 2.20-րդ կետով սահմանված կարգով:
- 2.22. Եթե սույն Ընթացակարգի 2. 4-րդ կետով սահմանված կարգով ներկայացված

իրավաբանական անձ Հաճախորդի նույնականացման տվյալները պատշաճ վավերացված են նոտարական կարգով կամ հաստատված են Ապոստիլով, և ՍՄ աշխատակիցը վստահ է դրանց պատշաճության մեջ, ապա իրավաբանական անձի գործադիր մարմնից ղեկավարից կարող է չպահանջել իրավաբանական անձի նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում տեսազանգի ընթացքում:

- 2.23. Տեսակապի ողջ ընթացքը տեսաձայնագրվում է և տեսաձայնագրությունը ենթակա է պահպանման Օրենքով սահմանված կարգով և ժամկետում Ընկերության ներքին ցանցում, յուրաքանչյուր Հաճախորդի համար բացված առանձին անվանական թղթապանակում:

### **Հաճախորդի ռիսկի դասակարգում**

- 2.24. Վերոնշյալ գործընթացի արդյունքում Հաճախորդը ստանում է ՓԼ/ԱՖ ռիսկի աստիճան՝ ցածր, միջին կամ բարձր: Հաճախորդի ՓԼ/ԱՖ ռիսկի աստիճանը գրառվում է Ընկերության **հաշվառման համակարգում**, որը ենթակա է փոփոխման միայն ՆԴՄ-ի կողմից՝ Ընկերության հաղորդակցության ներքին համակարգով նման հրահանգ տալու դեպքում:
- 2.25. Տրամադրվող տեղեկատվությունը ՆԴՄ-ին հնարավորություն է տալիս իրականացնել Հաճախորդի ռիսկի գնահատում, իսկ հետագայում նաև՝ որոշել կատարված գործարքների համապատասխանությունը Հաճախորդի գործարար բնութագրին, կամ դրանց կասկածելի կամ ոչ իրավաչափ լինելը:
- 2.26. ՆԴՄ-ի հավանությունն է պահանջվում նաև բոլոր այն դեպքերում, երբ Հաճախորդն ունի բարձր ռիսկի չափանիշ:
- 2.27. Բարձր ռիսկի չափանիշները սահմանվում են սույն Ընթացակարգին կից ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկ ախորժակով, կից Հաճախորդի ռիսկի դասակարգման մեթոդաբանությամբ՝ Հավելված 7-ով, ՀՀ ԿԲ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի եվ կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույց»-ով, սակայն չեն սահմանափակվում նշված փաստաթղթերով:
- 2.28. Բարձր ռիսկի չափանիշ ունեցող Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում ՆԴՄ-ն իրականացնում է հավելյալ պատշաճ ուսումնասիրություն և կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր, նախքան գործարքի իրականացումը կամ գործարար հարաբերության հաստատումը/հաշվի բացումը, եթե վերջինիս մասնագիտական կարծիքով առկա է դրա անհրաժեշտությունը, իսկ ցածր և միջին ռիսկայնություն ունեցող Հաճախորդների դեպքում սպասարկումն իրականացվում է ընդունված կարգով:
- 2.29. Հավաքագրված տեղեկությունների հիման վրա ՆԴՄ-ն իրականացնում է վերլուծություն՝ Հաճախորդի գործարար բնութագրի և նախատեսվող գործարքների համադրման մեթոդների, ինչպես նաև հանրամատչելի և վճարովի մասնագիտացված շտեմարաններից ստացված տեղեկատվություն ստանալու միջոցով, գնահատում և վերջնական որոշում է կայացնում բարձր ռիսկային Հաճախորդների հետ գործարար հարաբերություն հաստատելու վերաբերյալ:
- 2.30. Եթե ՆԴՄ-ին տրամադրվել է ողջ բավարար տեղեկատվությունը, ապա գործարար հարաբերության հաստատման կամ մերժման վերաբերյալ կարծիքը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, այլապես նշված ժամկետը գործում է վերջին անհրաժեշտ փաստաթղթի տրամադրման պահից սկսած:
- 2.31. Եթե Հաճախորդը հրաժարվում է տրամադրել անհրաժեշտ նույնականացման փաստաթղթերը, իր գործարար բնութագրի վերաբերյալ «Ճանաչիր Հաճախորդիդ» հարցաշարով պահանջվող տեղեկատվությունը, կամ տրամադրում է կեղծ կամ թերի տեղեկություններ, ապա Հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը մերժվում է:
- 2.32. Եթե պատշաճ ուսումնասիրության ընթացքում բացահայտվում է, որ առկա է այլ իրական

- շահառու և անհնար է իրականացնել վերջինիս նույնականացումն ու ինքնության ստուգումը, ապա Ընկերությունը չի իրականացնում գործարքը և/կամ խզում է գործարար հարաբերությունը:
- 2.33. Մերժված գործարար հարաբերությունների/գործարքների վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը՝ ներառյալ մերժման պատճառները, հաշվառվում և պահպանվում են ՆԴՄ կողմից՝ Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:
- 2.34. Եթե Հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը մերժվել է ՍՍ աշխատակիցների կողմից, ապա մերժված Հաճախորդի տվյալները պետք է փոխանցվեն ՆԴՄ-ին՝ հաշվառում իրականացնելու և Ընկերության ներքին ցանկերում ներառելու համար: Սույն դրույթը տարածվում է նաև արդեն իսկ գործող Հաճախորդների վրա, երբ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել տվյալների թարմացում և Հաճախորդը հրաժարվում է տրամադրել այն:
- 2.35. Եթե գործարար հարաբերություն հաստատելու կամ Հաճախորդին սպասարկման ընթացքում Ընկերության աշխատակիցներից որևէ մեկը տեղեկանում է կամ պատճառ ունի կասկածելու, որ Հաճախորդը մերժվել է մեկ այլ տեղական կամ օտարերկրյա ֆինանսական հաստատության կողմից, ապա այդ տեղեկատվության և հնարավոր հիմքերի մասին պետք է գրավոր նամակագրությամբ տեղեկացնի ՆԴՄ-ին՝ հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:
- 2.36. ՍՍ աշխատակցը կարող է չիրականացնել Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, բացառությամբ նույնականացման և ինքնության ստուգման, միայն այն դեպքում, եթե առկա են կասկածներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ և ողջամտորեն կարծում է, որ Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը կհանգեցնի Հաճախորդին իր կասկածների բացահայտմանը: Այս դեպքում աշխատակիցը էլեկտրոնային նամակով անհապաղ տեղեկացնում է ՆԴՄ-ին:
- 2.37. ՆԴՄ-ն **կիսամյակային կտրվածքով** իրականացնում է Հաճախորդների տվյալների, Ընկերության ծրագրային ապահովման համակարգում դրանց պատշաճ լրացվածության և «Ճանաչիր քո հախախորդին» հարցաշարերի ընտրանքային ստուգում՝ լրացված տվյալների որակի վերահսկման նպատակով, փաստաթղթավորում հայտնաբերած թերությունները և քննարկում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի հետ, տրամադրում խորհրդատվություն՝ ապագայում նման թերություններից խուսափելու համար: Էական շեղումներ հայտնաբերելու դեպքում ՆԴՄ-ն դրանք ընդգրկում է Ընկերության Գործադիր մարմնին և Ընկերության մասնակիցների ժողովին ներկայացվող հաշվետվության մեջ:
- 2.38. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Հաճախորդից ստացվող փաստաթղթերը և տեղեկությունները կարող են տրամադրվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն:
- 2.39. Վերոնշյալ լեզուներից տարբերվող լեզվով ներկայացվող փաստաթղթերը պետք է նոտարական կարգով թարգմանված լինեն հայերեն կամ վերոնշյալ լեզուներից մեկով, բացառությամբ այն դեպքերի, երբ ՆԴՄ անձնակազմը տիրապետում է համապատասխան տարբերվող լեզվին:
- 2.40. Ոչ ռեզիդենտ կամ օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ներկայացվող հիմնդիր փաստաթղթերը պետք է ներկայացվեն ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ, եթե առկա չէ Ընկերության գրավոր համաձայնությունը նման վավերացման բացակայության ընդունելիության վերաբերյալ:
- 2.41. Ընթացակարգի 2.40-րդ կետով նախատեսված պահանջից բացառություն են կազմում Անկախ պետությունների համագործացության (ԱՊԸ) անդամ երկրների պետական մարմինների կողմից տրամադրված հիմնադիր փաստաթղթերը, որոնք ենթակա չեն ապոստիլ կամ հյուպատոսական վավերացման՝ 21.12.1994թ-ին ուժի մեջ մտած «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով

իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայի հիման վրա:

### **ԳԼՈՒԽ 3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ**

- 3.1. Ընկերությունը գործարար հարաբերություն չի հաստատում սույն Ընկերության Ռիսկ ախորժակից դուրս գտնվող Հաճախորդների հետ և նույն փաստաթղթով սահմանված դեպքերում:
- 3.2. Ընկերության բոլոր աշխատակիցները պատասխանատվություն են կրում Ընկերության Ռիսկ Ախորժակով արգելված Հաճախորդների հետ գործարար հարաբերություն չհաստատելու պարտականության պատշաճ կատարման համար, իսկ նման դեպքերը բացահայտելու նպատակով ՆԴՄ կողմից իրականացվում է պարբերական դիտանցում: Խախտման դեպքերի բացահայտման դեպքում ՆԴՄ-ի գրավոր պահանջով Ընկերությունը խզում է գործարար հարաբերությունը տվյալ Հաճախորդների հետ:
- 3.3. Ընկերության Ռիսկ ախորժակով արգելված դեպքերից զատ այլ կասկածելի կամ անհասկանալի իրավիճակի հետ առնչվելու դեպքում Ընկերության աշխատակիցները դիմում են ՆԴՄ-ին՝ գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման և(կամ) մերժման վերաբերյալ կարծիք ստանալու կամ գործարար հարաբերություն հաստատելու և(կամ) գործարք կատարելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

### **ԳԼՈՒԽ 4. ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

- 4.1. Հաճախորդների և գործարքների ռիսկը գնահատելու նպատակով Ընկերությունն առաջնորդվում է ռիսկահենք մոտեցմամբ, որպեսզի կանխի և բացահայտի հնարավոր կասկածելի գործարքներն ու գործարար հարաբերությունները և արդյունավետորեն կառավարի դրանք:
- 4.2. Այս մոտեցման հիմքում ընկած է Հաճախորդներին ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգումը, երբ Հաճախորդի և (կամ) գործարքի ռիսկի գնատահման համար հաշվի է առնվում **երեք գործոն**՝ երկրի կամ աշխարհագրական տարածքի ռիսկը, հաճախորդի, գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկը, պրոդուկտի, ծառայության կամ մատուցման եղանակի ռիսկը, որից հետո իրականացվում է դասակարգում՝ **ցածր, միջին (ստանդարտ), բարձր** ռիսկի կատեգորիաների:
- 4.3. Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից **առավել բարձր** ռիսկայինին համապատասխան՝ բացառությամբ ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Նվազագույն պահանջների իրականացման կանոնակարգով սահմանված դեպքերի:
- 4.4. Հաճախորդի ռիսկի աստիճանը ձևավորվում է ՆԴՄ-ի կողմից մշակված մեթոդաբանության (**տե՛ս Հավելված 7**)՝ հաշվի առնելով բարձր ռիսկի չափանիշները: Ընկերության առաջնային օղակի աշխատակիցները Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում դասակարգում են վերջիններիս՝ շնորհելով ռիսկի աստիճան՝ Հավելված 7-ով սահմանված չափանիշների հիման վրա: Ռիսկի աստիճանի որոշման ընթացքում Հավելված 7-ով սահմանված բարձր ռիսկի չափանիշների բացակայության, սակայն նման կասկածի առկայության դեպքում առաջնային օղակի աշխատակիցները դիմում են ՆԴՄ-ին՝ Հաճախորդի ռիսկի աստիճանը որոշելու համար:
- 4.5. Առաջնային օղակի աշխատակցի կողմից Հաճախորդի ռիսկի դասը մուտքագրվում է Ընկերության հաշվառման համակարգ, որի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է վերջիններիս ղեկավարի և ՆԴՄ կողմից՝ Հաճախորդի տվյալների

- ընթացիկ դիտանցման ընթացքում:
- 4.6. Հաճախորդի ռիսկի դասի փոփոխություն կարող է տեղի ունենալ տվյալների թարմացումից հետո առաջնային օղակի աշխատակցի կողմից կամ ՆԴՄ-ի նախաձեռնությամբ, երբ գործարքների մոնիթորինգի ընթացքում ի հայտ է գալիս բարձր ռիսկի չափանիշ:
  - 4.7. Առաջնային օղակի աշխատակցի կողմից Հաճախորդի ռիսկի դասի փոփոխությունը պահանջում է ՆԴՄ գրավոր հավանությունը, որի համար վերջինս ներկայացնում է այն հիմնավորումները, որոնք հանգեցրել են ռիսկի դասի փոփոխության անհրաժեշտության:
  - 4.8. Ցածր ռիսկի չափանիշները սահմանված են սույն Ընթացակարգին կից Հավելված 7-ով:
  - 4.9. Ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) այն դեպքում, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները:
  - 4.10. Սույն Ընթացակարգին կից Հավելված 7-ի համաձայն՝ բարձր ռիսկի չափանիշը ձևավորվում է մեկ կամ մի քանի բարձր ռիսկի չափանիշների համակցությամբ, որով Ընկերության ՆԴՄ-ն առաջնորդվում է, **սակայն չի սահմանափակվում:**
  - 4.11. Բարձր ռիսկի չափանիշների առկայությունը կարող է ի հայտ գալ նաև Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում: Բարձր ռիսկի չափանիշները պարզելու և գնահատելու նպատակով ՆԴՄ-ն համադրում է Հաճախորդին նույնականացնող տվյալները, Հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքների բնույթը և նպատակը, հանրամատչելի աղբյուրներից ստացված տեղեկությունները, գործարքին առնչվող այլ հանգամանքներ:
  - 4.12. Առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումն ու գործարքների իրականացումը ինքնին սույն Ընթացակարգի համաձայն չի համարվում բարձր ռիսկի չափանիշ, քանի որ Ընկերության կողմից իրականացվում է առցանց նույնականացում, Ընկերության հետ կնքվող գործարքներն իրականացվում են միայն անկանխիկ եղանակով, ինչն էլ վկայում է այն մասին, որ Հաճախորդը մեկ այլ ֆինանսական հաստատությունում արդեն իսկ նույնականացվել է: Այդուհանդերձ, գործարար հարաբերության ընթացքում բարձր ռիսկի կամ կասկածելիության չափանիշի ի հայտ գալու դեպքում ՆԴՄ-ն կարող է վերանայել ռիսկը:
  - 4.13. ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը գնահատելու համար ՆԴՄ-ն տարեկան կտրվածքով իրականացնում է ռիսկերի ռազմավարական վերլուծություն՝ հաշվի առնելով Ընկերությանը ներհատուկ ռիսկերը, ներքին հսկողության համակարգը, մնացորդային ռիսկը և դրա կառավարումը: Վերլուծության հիման վրա կազմվում է հաշվետվություն և ներկայացվում Ընկերության Գորադիր մարմնին/Տնօրինությանը/Խորհրդին (առկայության դեպքում):
  - 4.14. Ռիսկերի ռազմավարական վերլուծություն իրականացվում է ՆԴՄ կողմից «ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծության իրականացման մեթոդաբանությամբ» սահմանված կարգով, եղանակով և ժամկետներում:
  - 4.15. ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկերի նախնական գնահատում իրականացվում է նոր ծառայության կամ պրոդուկտի ներդրման, ծառայությունների մատուցման նոր եղանակների կիրառում (օր. ավտոմատացված նոր համակարգերի կիրառում, երրորդ կողմի միջոցով նույնականացում և այլն), նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման, գործող ծառայությունների էական պայմանների, պարամետրերի փոփոխությունների:
  - 4.16. Պրոդուկտների զարգացման, բիզնես թիմի կամ շահագրգիռ ստորաբաժանման կողմից մինչև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ պրոդուկտների կամ ծառայությունների ներդրումը, խելամիտ ժամկետներում, Ընկերության ՆԴՄ-ին գրավոր կերպով ներկայացվում է.
    - 4.16.1. պրոդուկտի կամ ծառայության մանրամասն նկարագիրը,
    - 4.16.2. թիրախային հաճախորդների շրջանակը և աշխարհագրական տարածքը,
    - 4.16.3. մատուցման եղանակները, գործարքների տեսակները և գնահատված ծավալները

4.16.4. գործարկման պլանավորած ժամկետը:

- 4.17. ՆԴՄ-ն, ներկայացված տեղեկատվության և իր կողմից իրականացված վերլուծության արդյունքում, գնահատում է պոտենցիալ ռիսկերը՝ առաջնորդվելով պրոդուկտի ռիսկի գնահատման միջազգային լավագույն սկզբունքներով:
- 4.18. Հաճախորդի ռիսկի գնահատման համատեքստում հաշվի է առնում թիրախային շուկայում բարձր ռիսկային հաճախորդների առկայությունը և դրանց ծավալը, գործարար հարաբերության հաստատման ձևաչափը, երրորդ կողմի միջոցով նույնականացման իրականացումը և այլն:
- 4.19. Պրոդուկտի կամ ծառայության ռիսկի գնահատման ընթացքում հաշվի է առնվում ՓԼ/ԱՖ և ԶՈԶ ՏՖ սխեմաներում դրանց կիրառելիության հնարավորությունը, օր.՝ արագությունը, գլոբալ հասանելիությունը, կանխիկի ներգրավվածությունը, գաղտնիությունը և այլն:
- 4.20. Աշխարհագրական ռիսկի գնահատման տեսանկյունից կարևորվում է ծառայության կամ պրոդուկտի առաջարկը բարձր ռիսկային երկրներում կամ դրանց միջոցով գործարքների իրականացման հնարավորությունը կամ նման երկրների ներգրավվածությունը:
- 4.21. Տեխնոլոգիական ռիսկը գնահատվում է օգտագործվող տեխնոլոգիայի առանձնահատկությունների համատեքստում, օր.՝ գաղտնագրման մեթոդները, P2P տեխնոլոգիաների կիրառությունը, որոնք կարող են դժվարացնել հաճախորդի ստուգումը կամ գործարքների մոնիտորինգը:
- 4.22. Գործընկերոջ/մատակարարի ռիսկի համատեքստում՝ երրորդ կողմի հանդիսացող գործընկերների ներգրավվածությունը և նրանց ՓԼ/ԱՖ համապատասխանության մակարդակը:
- 4.23. Ռիսկերի գնահատման և վերլուծության փաստաթղթավորման նպատակով ՆԴՄ-ն իրականացնում է գնահատում՝ օգտագործելով յուրաքանչյուր ռիսկի դասի կողմից ներկայացվող խոցելիություններն ու դրանց կառավարման եղանակները:
- 4.24. Պրոդուկտի գնահատման ամփոփ արդյունքները ներկայացվում են Հավելված 16-ով սահմանված ռիսկերի գնահատման տեղեկանքի համաձայն: Մնացորդային ռիսկը գնահատվում է՝ Ցածր, Միջին, Միջինից-բարձր կամ Բարձր:
- 4.25. Եթե գնահատման արդյունքներով պրոդուկտի կամ ծառայության ռիսկը գնահատվում է միջինից-բարձր կամ բարձր, ապա ՆԴՄ-ն կազմում է մնացորդային ռիսկի նվազեցման պլան, որը ներառում է պրոդուկտի կամ ծառայության ռիսկը, նախատեսվող մնացորդային ռիսկի մակարդակը գործողությունների ավարտից հետո, ինչպես նաև չափելի և իրագործման համար տեսանելի ժամանակացույց:
- 4.26. Մնացորդային ռիսկի նվազեցման միջոցառումների և հանձնարարականների կատարման արդյունավետությունը գնահատվում է ՆԴՄ կողմից և բավարար լինելու դեպքում ՆԴՄ կողմից տրվում է գրավոր հավանություն:

#### **ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ**

- 5.1. Կասկածելի գործարքները վեր հանելու նպատակով ՆԴՄ-ն իրականացնում է գործարքների մոնիթորինգ՝ մշակելով կասկածելի գործարքները վեր հանելու համար հնարավոր սցենարներ՝ հիմնվելով Լիազոր մարմնի կողմից հրապարակված կասկածելիության չափանիշների, տիպաբանությունների և Ընկերության Ռիսկի ախորժակի վրա:
- 5.2. Բոլոր տեսակի գործարար հարաբերությունների և գործարքների վերլուծության մասով ՆԴՄ-ն նվազագույնը յուրաքանչյուր կիսամյակ իրականացնում է ընթացիկ մոնիթորինգ, որի ընտրանքային սեգմենտը հիմնված է Հաճախորդի կամ գործարար հարաբերության ռիսկայնության վրա՝ չկենտրոնանալով գործարքների շեմերի վրա: ՆԴՄ-ի կողմից իրականացվող մոնիթորինգը միտված է հայտնաբերել Հաճախորդների գործունեության անսովոր օրինաչափությունները, համեմատել նրանց գործարքների պատմությունը

- իրականացվող գործարքների և գործարար բնութագրի հետ, պարզել միջոցների խոշոր, անսովոր կամ կասկածելի տեղաշարժերն ու շեղումները:
- 5.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բարձր ռիսկային Հաճախորդների և (կամ) գործարքների ուսումնասիրության նպատակով կատարվում է հավելյալ պատշաճ ուսումնասիրություն (այսինքն՝ **Հավելյալ ՊՈԻ**), որի ընթացքում առաջնային օղակի աշխատակիցներ պետք է աջակցեն ՆԴՄ-ին՝ գործարքի Հավելյալ ՊՈԻ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության և (կամ) փաստաթղթերի ձեռքբերման և հավաքագրման հարցում: Հավելյալ ՊՈԻ իրականացվում է նաև այն ժամանակ, երբ կատարվում է, մշակվում է կամ հայտնի է դառնում Հաճախորդի կողմից վերոնշյալ տիպի գործարքի կատարման մտադրության մասին: Հավելյալ ՊՈԻ աջակցող գործողությունների շրջանակը ՄՍ և առաջնային օղակի աշխատակիցների կողմից առնվազն ենթադրում է՝
- 5.3.1. գործարքի կողմերի, ներգրավված երրորդ անձանց (առկայության դեպքում), գործարքի նպատակի և կատարման պայմանների վերաբերյալ լիարժեք տեղեկությունների պարզաբանում և հիմնավորող փաստաթղթերի (պայմանագիր, բանկային հաշվի քաղվածք, և այլն, անհրաժեշտության դեպքում նաև նոտարով վավերացված) ձեռք բերում:
  - 5.3.2. Հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի պարզաբանում՝ պահանջելով դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր, օրինակ՝ աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք, հարկային դեկլարացիա, ժառանգության կամ նվիրատվության ստացման վերաբերյալ նոտարով հաստատված հիմքեր և այլն):
- 5.4. Հավելյալ ՊՈԻ ընթացքում ձեռք բերված տեղեկությունները և/կամ փաստաթղթերը փոխանցվում են ՆԴՄ-ին, որն իր հերթին իրականացնում է հետևյալը.
- 5.4.1. Գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ վերուծություն իրականացնելիս հիմնվում է ՄՍ կամ առաջնային օղակի աշխատակցի կողմից Հաճախորդի վերաբերյալ ձեռք բերած անհրաժեշտ տեղեկությունների (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթերի) վրա, օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, ուսումնասիրում է ԶԼՄ-ներում առկա տեղեկատվությունը:
  - 5.4.2. Կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին:
  - 5.4.3. Իրականացնում է գործարքի կողմերի, իրական շահառուի, ինչպես նաև լիազորված անձի նույնականացման միջոցառումներ:
  - 5.4.4. Հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորին ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված:
  - 5.4.5. Հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով:
  - 5.4.6. Գնահատում է գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը՝ կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների հիմքերի և չափանիշների հետ համադրություն իրականացնելու միջոցով:
  - 5.4.7. ՀՊՈԻ եզրակացության հիման վրա հաստատում/մերժում է գործարքը, իսկ արդեն իսկ կատարված գործարքների/հաստատված գործարար հարաբերությունների մասով անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում շարունակել/խզել գործարար հարաբերությունը, սահմանափակումներ կիրառել, որոշակի միավոր ժամանակահատվածում հսկողություն սահմանել Հաճախորդի կողմից իրականացվող գործարքների նկատմամբ:



- 5.5. Երբ հավաքագրված տեղեկությունների և Հաճախորդների գործարքների համադրման արդյունքում ՆԴՄ-ն համոզվում է դրանց օրինաչափության մեջ, ապա հաստատում է գործարքի/գործարար հարաբերության կատարումը, իսկ բավարար փաստաթղթերի բացակայության կամ ՀՊՈԻ իրականացնելու անհնարինության դեպքում ՆԴՄ-ն պարտավոր է դիտարկել կասկածելի գործարք տրամադրելու հարցը:
- 5.6. Գործարքների մոնիթորինգի և ՀՊՈԻ արդյունքները՝ այդ թվում մերժված և չիրականացված գործարքների/գործարար հարաբերության վերաբերյալ առկա ողջ տեղեկությունները փաստաթղթավորում և պահպանում է Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:
- 5.7. Հաճախորդների և գործարքների Հավելյալ ՊՈԻ-ն իրականացվում է ՆԴՄ կողմից Հավելյալ պատշաճ ուսումնասիրության իրականացման կարգով սահմանված ընթացակարգին, ձևաթղթերին և բովանդակային և ձևական պահանջներին համապատասխան:

#### **ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԱՐԽԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

- 6.1. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունների և «Ճանաչիր քո հախախորդին» հարցաթերթի թարմացումը (բացառությամբ Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացման) կատարվում է ոչ ուշ, քան.
  - 6.1.1. **տարին մեկ անգամ**՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
  - 6.1.2. **վեց ամիսը մեկ անգամ**՝ բարձր ռիսկի դեպքում
  - 6.1.3. **երկու տարին մեկ անգամ**՝ ցածր ռիսկի դեպքում
  - 6.1.4. **ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ անգամ**՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում
- 6.2. Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունները թարմացվում են **տարին մեկ անգամ**:
- 6.3. Եռամսյակը մեկ անգամ ՆԴՄ-ն պատրաստում է թարմացման ենթական Հաճախորդների ցանկը սույն գլխում նշված ժամկետներին համապատասխան և տրամադրում ՍՍ բաժնի ղեկավարին՝ Հաճախորդների տվյալների թարմացումը կազմակերպելու նպատակով: Եթե եռամսյակի ընթացքում թարմացման ենթակա հաճախորդներ առկա չեն, ապա ՆԴՄ-ն կարող է չկազմել թարմացման ենթակա հաճախորդների ցանկ:
- 6.4. Թարմացման ժամկետը որոշելու համար հիմք է հանդիսանում Հաճախորդի հաշվի բացման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը, իսկ հետագա թարմացումների համար ժամկետը հաշվարկվում է վերջին թարմացման ամսաթվից, որը ենթակա է պարտադիր հաշվառման:
- 6.5. Նույնականացման տվյալներից զատ թարմացման է ենթակա նաև «Ճանաչիր Հաճախորդիդ» հարցաթերթը, իսկ ֆինանսական կազմակերպությունների դեպքում նաև Wolfsberg հարցաշարը (CBDDQ և (կամ) FCCQ) և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի» քաղաքականությունը, եթե Ընկերության կառուցվածքում կամ գործադիր մարմնի կազմում տեղի չեն ունեցել փոփոխություններ:
- 6.6. Սույն Ընթացակարգի 6.1-րդ կետով սահմանված ժամկետում չթարմացված Հաճախորդները չպետք է հնարավորություն ունենան իրականացնել գործարքներ՝ մինչ տվյալների պատշաճ թարմացումը:
- 6.7. Եթե տեղեկատվության թարմացման վերաբերյալ պատշաճ ծանուցված Հաճախորդը համապատասխան ծանուցումը ստանալու օրից **1 օրացույցային ամսվա** ընթացքում չի ներկայացնում պահանջված փաստաթուղթը, կամ ներկայացված փաստաթուղթը ՆԴՄ մասնագիտական կարծիքով չեն բավարարում ՓԼ/ԱՖ ռիսկերի և (կամ) կասկածելիության չափանիշների առկայությունը կամ բացակայությունը ողջամտորեն հիմնավորելու համար (կամ բավարար չեն փաստաթղթային հիմնավորվածությունն ապահովելու տեսնակյունից),

- ապա Հաճախորդի կողմից գործարքների իրականացման հնարավորությունը սահմանափակվում է, մինչ համապատասխան փաստաթղթերի ներկայացումը:
- 6.8. Եթե տեղեկատվության թարմացման վերաբերյալ պատշաճ ծանուցված Հաճախորդը համապատասխան ծանուցումը ստանալու օրից **1 օրացույցային տարվա** ընթացքում չի ներկայացնում պահանջված փաստաթուղթը, ապա Հաճախորդը գնահատվում է որպես «**Ոչ ակտիվ**», որի կողմից գործարքների իրականացումը թույլատրվում է միայն սույն Ընթացակարգով սահմանված կարգով նույնականացումից և ՀՊՈԻ իրականացումից հետո (տե՛ս գլուխ 2-րդ):
- 6.9. Հաճախորդների սապարկման բաժնի ղեկավարը թարմացման արդյունքների՝ այդ թվում չթարմացված Հաճախորդների մասին տեղեկատվությունը փոխանցում է ՆԴՄ-ին գրավոր եղանակով՝ պատշաճ փաստաթղթավորմամբ:

**ԳԼՈՒԽ 7. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ ԳԱՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՍՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 7.1. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ինչպես ներքին և արտաքին ազդակների ստացման դեպքում, այնպես էլ՝ ՆԴՄ-ի նախաձեռնությամբ: Գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը որոշելու գործընթացը կարող է սկսվել ոչ միայն արդեն կատարված գործարքների և հաստատված գործարար հարաբերությունների, այլև գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձի դեպքում:
- 7.2. Ներքին ազդակներ են համարվում աշխատակիցների, Ընկերության կառավարման մարմինների և այլ աշխատակիցների կողմից ՆԴՄ-ին փոխանցված ազդակները:
- 7.3. Արտաքին ազդակներ են համարվում Լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:
- 7.4. Գործարքը/գործարար հարաբերությունը (այսուհետ սույն գլխի շրջանակներում՝ **Գործարք**) կարող է համարվել կասկածելի, եթե՝
- 7.4.1. Հաճախորդը Ընկերությանն առաջարկում է կնքել կամ կնքում է այնպիսի Գործարք որով հնարավոր չէ պարզել Հաճախորդի ինքնությունը կամ ստանալ նախատեսված տեղեկություններ,
  - 7.4.2. Գործարքի պայմանները չեն համապատասխանում Հաճախորդի գործարար բնութագրին, ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին,
  - 7.4.3. Առաջնային օդակի աշխատակցին պարզ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված Գործարքը ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում,
  - 7.4.4. Ըստ իր կատարման տրամաբանության և շարժի (դինամիկայի)՝ Գործարքը համապատասխանում է միջազգային լավագույն փորձով և ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացրած ուղեցույցներով սահմանված տիպաբանություններին,
  - 7.4.5. Ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված Գործարքի (գործարքների) արժեքը չի գերազանցում օրենքով սահմանված սահմանաչափ(եր)ը միայն այն պատճառով, որ Հաճախորդը ցանկանում է խուսափել Ընկերության կողմից այդ գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրումից ԿԲ,
  - 7.4.6. առկա է համընկնում Հաճախորդի կամ Գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկիչների, միջազգային սանկցիաների ենթարկված, ԶՈԶ ՏՖ հետ կապված անձանց կամ Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև:

- 7.5. Կասկածելի և արտասովոր գործարքի կամ գործարար հարաբերության ազդակի դեպքում, առաջնային օղակի աշխատակցին անմիջապես տեղեկացնում ՆԴՄ-ին՝ նշելով կասկածելիության այն չափանիշները համաձայն որոնց գործարքը իրենց կողմից դիտարկվել է որպես կասկածելի՝ սույն Ընթացակարգին կից Հավելված 9-ի համաձայն:
- 7.6. ՆԴՄ-ն ուսումնասիրում է ստացված ազդակը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հավելյալ ուսումնասիրություն և կիրառելով սահմանափակումներ: Վերլուծության արդյունքում ՆԴՄ-ն որոշում է կայացնում ՖԴԿ-ին կասկածելի գործարքի մասին հաշվետվություն ներկայացնելու մասին:
- 7.7. Եթե ներքին և արտաքին ազդակների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կատարած վերլուծության արդյունքում ՆԴՄ-ն գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակում, և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրում լիազոր մարմնին, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:
- 7.8. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու վերջնական որոշումը ընդունվում է ՆԴՄ-ի կողմից:
- 7.9. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու համար վերլուծությունն իրականացվում է «Հավելյալ պատշաճ ուսումնասիրության մեթոդաբանությամբ» սահմանված վերաբերելի բովանդակային և ձևական պահանջների հիման վրա:

#### **ԳԼՈՒԽ 8. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՅՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 8.1. Օրենքի համաձայն Ընկերությունը պարտավոր է ՖԴԿ ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների մասին հաշվետվություն: Քանի որ Ընկերության Հաճախորդների կողմից իրականացվում են միայն անկանխիկ գործարքներ, հետևաբար՝ պարտադիր տեղեկացման են ենթական այն գործարքները, որոնց շեմը հավասար է կամ գերազանցում է 20 մլն. ՀՀ դրամը:
- 8.2. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների տրամադրման կարգն ու ժամկետները կարգավորվում են ՀՀ ԿԲ համապատասխան որոշումներով:
- 8.3. Վերը նշված գործարքները տեղեկացման են ենթակա ՆԴՄ-ի կողմից, գործարքի իրականացումից առավելագույնը երեք օրվա ընթացքում, որոնք ՖԴԿ-ին են տրամադրվում ՀՀ ԿԲ-ի և Ընկերության միջև գործող Lotus նամակագրական կապով:
- 8.4. Եթե պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներում առկա է տեղեկատվության անճշտություն, որի հետևանքով անհնար է դառնում սահմանված ժամկետում դրանց ուղարկումը, ապա հետևանքների համար պատասխանատվություն է կրում գործարքն իրականացնող աշխատակիցը:
- 8.5. Անկախ գումարային մեծությունից՝ տեղեկացման ենթակա գործարքներ չեն համարվում.
  - 8.5.1. Ֆինանսական երկրորդային շուկայում երկու մասնագիտացված անձանց միջև կնքվող գործարքներ, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից,
  - 8.5.2. Ընկերության կողմից սեփական կարիքների համար կատարվող գործարք՝ Ընկերության ընթացիկ գործունեության համար ապահովման նպատակով՝ բացառությամբ իր Հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,
  - 8.5.3. Հաճախորդի հետ կնքված և նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքներում փոփոխությունները, որոնք չեն առաջացնում գործարքի գումարի կամ արժույթի փոփոխություն:

**ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՍԵՑՈՒՄ, ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԿԱՍ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ**

- 9.1. ՆԴՄ-ն կարող է կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը մինչև 5 օրով, եթե առկա են փողերի լվացման հիմնավոր կասկածներ, իսկ եթե առկա է ահաբեկչության ֆինանսավորման կասկած, ապա ՆԴՄ-ն պարտավոր է սառեցնել գործարար հարաբերությունը 5 օրով: Նշված դեպքերում ՆԴՄ-ն պարտավոր է ԿԳՀ տրամադրել ՖԴԿ-ին:
- 9.2. Այն դեպքում, երբ լիազոր մարմինը կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ ծանուցում է տրամադրում քրեական հետապնդում իրականացնող մարմնին, կասեցման ժամկետը համարվում է երկարաձգված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի մասին լիազոր մարմինը տեղեկացնում է Ընկերությանը: Կասեցման ժամկետը երկարաձգելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը 15 օրվա ընթացքում տեղեկացնում է Լիազոր մարմնին: Կասեցման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին Լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում կասեցումը վերանում է:
- 9.3. Եթե գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման որոշումը կայցվել է Լիազոր մարմնի կողմից, ՆԴՄ-ն կատարում է հանձնարարականը գրությունն ստանալուց անմիջապես հետո:
- 9.4. Գործարքի կասեցումը դրա իրականացման մերժումն է կամ ժամկետային արգելքը, մինչ Լիազոր մարմնից համապատասխան որոշման ստացումը (գործարքի կատարման վերաբերյալ):
- 9.5. ՆԴՄ-ն պետք է մերժի կամ դադարեցնի գործարար հարաբերության հաստատումը կամ գործարքի իրականացումը, եթե համապատասխան գրություն է ստացել Լիազոր մարմնից կամ եթե Հաճախորդը հրաժարվում է ներկայացել Ընկերության կողմից պահանջվող վերջինիս նույնականացման փաստաթղթերը, որի արդյունքում հնարավոր չէ իրականացնել գործարքի/գործարար հարաբերության պատշաճ ուսումնասիրություն:
- 9.6. Գործարքի կամ գործարար հարաբերության մերժման կամ դադարեցման դեպքում, ՆԴՄ-ն դիտարկում է Լիազոր մարմնին-ին ԿԳՀ տրամադրելու հնարավորությունը:
- 9.7. ՄԱԿ-ի ցանկերի հետ ամբողջական համընկման դեպքում, ինչպես նաև Լիազոր մարմնից համապատասխան գրություն ստանալուց անմիջապես հետո ՆԴՄ-ն սառեցնում է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց միջոցները և սահմանափակում Հաճախորդի հաշիվներով ցանկացած շարժ: Արգելվում է նաև բացել նոր հաշիվներ տվյալ անձանց համար:
- 9.8. Ահաբեկչության հետ կապված անձանց ՄԱԿ-ի ցանկը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի վեբ կայքում, որի հիման վրա ՆԴՄ-ն ստուգում է համընկնումների առկայությունը կամ բացակայությունը: Տվյալ ցանկում ներառված անձանց հետ համընկնման դեպքում, ՆԴՄ-ն սառեցման մասին որոշումն ինքնուրույն է կայացնում և անմիջապես Լիազոր մարմնին ներկայացնում է ԿԳՀ:
- 9.9. Սառեցման վերաբերյալ որոշումը վերացվում է միայն Լիազոր մարմնի համապատասխան գրությամբ:
- 9.10. Գործարքի կամ գործարար հարաբերության սառեցման և կասեցման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՆԴՄ-ն:
- 9.11. Ընկերության գործադիր մարմնին/Տնօրինությանը ներկայացվող հաշվետվության մեջ ՆԴՄ-ն պետք է ներկայացնի կասեցված, սառեցված կամ իրականացումը մերժած գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն:

**ԳԼՈՒԽ 10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՆՏՐԱԳԵՆՏԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 10.1. Ֆինանսական հաստատությունների հետ կոնտրագենտային կամ համանման հարաբերություններ հաստատելու ընթացքում, ՆԴՄ-ն իրականացնում է Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ պարզելով գործընկեր հաստատության գործունեության բնույթը, գործարար համբավը, արդյոք ֆինանսական հաստատության նկատմամբ առկա են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտման վարույթներ, գնահատում է տվյալ հաստատության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ընթացակարգերը:
- 10.2. Պատշաճ ուսումնասիրության իրականացման համար տեղեկությունների հավաքագրման նպատակով առաջնային օղակի աշխատակիցը կոնտրագենտ ֆինանսական հաստատությանն է ուղարկում սույն Ընթացակարգին կից ֆինանսական հաստատությունների համար նախատեսված «Ճանաչիր քո հախախորդին» հարցաթերթիկը, ինչպես նաև պահանջում է ներկայացնել սահմանված փաստաթղթերը: Սույն կետով սահմանված տեղեկատվությունն ու հավաքագրված փաստաթղթերը փոխանցում է ՆԴՄ-ին՝ վերջինիս կողմից ստուգումներն իրականացնելու նպատակով:
- 10.3. ՆԴՄ-ն հավաստիանում է նաև, որ օտարերկրյա ֆինանսական հաստատությունը Ընկերության մոտ բացված ոչ սեփական միջոցների, omnibus<sup>1</sup> հաշիվների բացման դեպքում իրականացնում է իր Հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն և հարցման դեպքում կարող է տրամադրել այդ Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները: Այս հանգամանքը հավաստվում է Ֆինանսական հաստատության կողմից սույն ընթացակարգին կից թիվ 13-րդ, 14-րդ և 15-րդ հավելվածներով նախատեսված հավաստագրում-նամակների ստորագրման միջոցով:
- 10.4. Եթե փաթեթն ամբողջական է և պարզաբանման հարցեր չկան, ՆԴՄ-ն պատշաճ ուսումնասիրությունն իրականացնում է առավելագույնը 3 օրվա ընթացքում և ստուգման արդյունքները տրամադրում է հարցումն իրականացնող ստորաբաժանմանը:
- 10.5. Ընկերությունն արգելում է կոնտրագենտային կամ համանման այլ հարաբերություններ հաստատել կամ շարունակել կեղծ ընկերությունների (shelf companies) հետ, ինչպես նաև թույլ չի տալիս կեղծ ընկերությունների (shelf companies) կողմից իր ծառայությունների օգտագործումը:

**ԳԼՈՒԽ 11. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ**

- 11.1. ՆԴՄ կողմից Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» քաղաքականության 2. 5-րդ կետով սահմանված և գործադիր մարմնին/Մանսակիցների Ընդհանուր ժողովին ներկայացվող կիսամյակային հաշվետվությունը նվազագույնը ներառում է.
- 11.1.1. պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը,
  - 11.1.2. կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) թիվն ու համառոտ նկարագրությունը,
  - 11.1.3. այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն ներկայացվել որպես կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ,
  - 11.1.4. կասեցված կամ իրականացումը մերժված գործարար հարաբերությունների և

<sup>1</sup> Երբ ֆինանսական հաստատությունը բացվող բրոքերային հաշվով պատրաստվում է շրջանառել իր Հաճախորդների միջոցները:

- գործարքների թիվը և համառոտ նկարագրությունը,
- 11.1.5. կասեցված գործարքների արժեքը,
- 11.1.6. սառեցված ֆինանսական միջոցների չափը,
- 11.1.7. ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող այլ հարցեր և տեղեկություններ,
- 11.1.8. Ընկերության գործադիր մարմնի/ Տնօրինության կողմից պահանջվող այլ տեղեկատվություն:
- 11.2. Ներքին աուդիտը, Օրենքով սահմանված կարգով, **տարեկան առնվազն մեկ անգամ** ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ Ընկերության գործադիր տնօրենն ու ՆԴՄ-ն ապահովում են Ընկերության գործունեության լիարժեք համապատասխանությունն Օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերի, Քաղաքականության, սույն Ընթացակարգի և այլ ներքին իրավական ակտերի պահանջներին:
- 11.3. Ներքին աուդիտը գործադիր մարմնին/ Տնօրինությանը (պատճենը՝ Գործադիր տնօրենին) հաշվետվություններ է ներկայացնում ստուգումների արդյունքում ձևավորված իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և պատժամիջոցների կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:
- 11.4. Ներքին աուդիտը ցանկացած ստորաբաժանման ընթացիկ կամ պլանային ստուգման ընթացքում կասկածելի գործարքների կամ փողերի լվացման հավանական սխեմաների, Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա (ներքին ու արտաքին) պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում, մինչև ստուգման արդյունքների վերաբերյալ փաստաթուղթը համապատասխան իրավասու մարմնին ներկայացնելը, այդ մասին պետք է տեղեկացնի ՆԴՄ-ին՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու նպատակով:

#### ***ԳԼՈՒԽ 12. ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ***

- 12.1. ՆԴՄ-ն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների պահպանման և կանխարգելման թեմայով տարին մեկ անգամ կազակերպում է ուսուցում Ընկերության առաջնային օղակի աշխատակիցների, Ներքին աուդիտի, Գործադիր մարմնի, մասնակիցների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար:
- 12.2. Նոր ընդունված աշխատակիցների ուսուցումն իրականացվում է աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:
- 12.3. Ուսուցման նյութերը, մասնակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառվում և պահպանվում են 5 տարի ժամկետով:
- 12.4. Ուսուցման ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրությունները հաշվառվում են համաձայն **Հավելված 8-ի** (ՓԼ/ԱՖ կանխարգելման և պատժամիջոցների համապատասխանության մասով անցկացված ուսուցման/վերապատրաստման թերթիկ) և պահպանվում են ՆԴՄ կողմից առնվազն 5 տարի ժամկետով:
- 12.5. Ուսուցումն ու վերապատրաստումն այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված լինելու դեպքում, դասընթացին մասնակցած աշխատակիցը հնանարավորինս կարճ ժամկետում ՆԴՄ-ին է ներկայացնում մասնակցությունը հիմնավորող փաստաթուղթը, որը պահպանվում է ՆԴՄ կողմից առնվազն 5 տարի ժամկետով:

#### ***ԳԼՈՒԽ 13. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ***

- 13.1. Գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների ստացումը, հավաքագրումը կատարվում է դրանց իրականացման շրջանակներում: Տեղեկատվության հավաքագրումը կատարվում է առաջնային օղակի աշխատակցի կողմից, գործարքին առնչվող բաժինների կողմից, իսկ գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ միայն ՆԴՄ-ին հասանելի տեղեկությունների դեպքում հավաքագրումը կատարվում է նաև ՆԴՄ-ի կողմից:
- 13.2. Տեղեկությունները հավաքագրվում են Հաճախորդներից, գործարքի մասնակիցներից, արտաքին աղբյուրներից և տեղեկատվական շտեմարաններից:
- 13.3. Հավաքագրված տեղեկությունների հաշվառումը կարող է իրականացվել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով: Դրանց հաշվառումն իրականացնում է տեղեկատվության տիրապետողի կողմից:
- 13.4. Հաճախորդների անձական ֆայլերի թղթապանակին՝ Հաճախորդի անունով բացված ֆոլդերում կցվում են նույնականացման, ինքնության ստուգման համար անհրաժեշտ, «Ճանաչիր Հաճախորդիդ» հարցաթերթի և այլ հավաքագրված փաստաթղթերի լրացված և ամբողջական տարբերակները:
- 13.5. Կցված տեղեկությունները պետք է լինեն հավաստի, ամբողջական, արդիական:
- 13.6. Ընկերությունը պահպանում է հետևյալ տեղեկատվությունը
- 13.6.1. Հաճախորդի նույնականացման տվյալները,
- 13.6.2. Ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները (ներառյալ՝ Հաճախորդի (և գործարքի մյուս կողմի) անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության (գտնվելու) վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը), որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար և (կամ) գործարար հարաբերության իրական պատկերը,
- 13.6.3. Գործարքի և (կամ) գործարար հարաբերության ընթացքում Ընկերությանը հասանելի դարձած այլ տեղեկություն և փաստաթղթեր,
- 13.7. Տեղեկատվության պահպանման ժամկետը սահմանված է Օրենքով և կազմում է հինգ տարի:

#### **ԳԼՈՒԽ 14. ՊԱՏՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- 14.1. Ընկերության ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների կողմից Ընթացակարգով և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Քաղաքականությամբ սահմանված պահանջների խախտումներ թույլ տալու դեպքում, Գործադիր տնօրենը նրանց նկատմամբ կարող է կիրառել ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
- 14.2. Ընկերության ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց և (կամ) իրենց աշխատակիցների կողմից ՆԴՄ-ին՝ սույն Ընթացակարգով և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Քաղաքականությամբ նախատեսված, տրամադրվող տվյալներում անարժանահավատության, ոչ ժամանակին, թերի և (կամ) ոչ ամբողջական ներկայացնելու համար:
- 14.3. Ընկերությունը կամ նրա աշխատակիցները (ղեկավարները) չեն կարող ենթարկվել քրեական, վարչական, քաղաքացիական կամ այլ պատասխանատվության Օրենքով նախատեսված իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար:

#### **ԳԼՈՒԽ 15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 15.1. Ընթացակարգն ուժի մեջ է հաստատման պահից:

- 15.2. Ընթացակարգի Հավելվածները և գործընթացից բխող այլ անհրաժեշտ փաստաթղթերը հաստատվում են գործադիր մարմնի կողմից, և դրանց խմբագրումը կամ նոր փաստաթղթի ձևավորումը չի հանգեցնում Ընթացակարգի խմբագրության:
- 15.3. Ընթացակարգի տիրապետող է հանդիսանում Ընկերության ՆԴՄ-ն:
- 15.4. ՆԴՄ-ին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են Ընկերության կողմից ձեռք բերվող ու պահպանվող օրենսդրությամբ և Ընթացակարգով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) գործարքների և (կամ) գործարար հարաբերությունների մասով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից վերահսկողություն իրականացնելու համար:
- 15.5. Գործող օրենսդրության մեջ հետագայում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվելու դեպքում Ընկերությունն առաջնորդվում է այդ փոփոխություններով և (կամ) լրացումներով՝ մինչև Ընթացակարգի օրենսդրության նոր պահանջներին համապատասխանեցնելը:
- 15.6. Ընթացակարգի հաստատմանը հաջորդող մեկշաբաթյա ժամկետում այն CBANet համակարգով ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ:



**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի  
տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգ  
Հավելված թիվ 1**

**List of documents required for opening brokerage/depository accounts  
for non-resident individuals**

**Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բրոքերային/պահառուական հաշիվների  
բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

**!** Acceptable languages for document submission are Armenian, Russian, and English. Documents must be submitted in their original scanned versions. In the case of a non-resident company, the documents must be duly certified by a competent state authority to confirm their authenticity (notarization/apostille).

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*

**!** This list is not exhaustive or final. Upon receipt of the complete set of documents, our Anti-Money Laundering and Counter-Terrorist Financing (AML/CFT) team reserves the right to request additional documents and clarifications in accordance with applicable law.

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

| N  | Documents                                                                                                                                                                              |
|----|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|    | Փաստաթղթեր                                                                                                                                                                             |
| 1. | “KYC” Questionnaire.                                                                                                                                                                   |
|    | «Ճանաչիր Քո Հաճախորդին» հարցաթերթիկ                                                                                                                                                    |
| 2. | Passport (for a citizen of the Russian Federation: foreign and domestic) (ensuring that                                                                                                |
|    | personal information, including the photo, number, and registration address, is clearly visible).                                                                                      |
|    | Անձը հաստատող փաստաթուղթ (ՌԴ քաղաքացիների համար՝ ՌԴ քաղաքացու անձնագիր և արտաքին անձնագիր) (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն): |
| 3. | If dual citizenship is held, it is mandatory to provide the passport of the second citizenship,                                                                                        |
|    | ensuring that personal details such as the photograph, passport number, and registered address are clearly visible.                                                                    |

Երկրորդ քաղաքացիության առկայության դեպքում՝ պարտադիր է երկրորդ քաղաքացիության անձնագրի ներկայացումը (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն):

4. Justification of the actual residential address — such as utility bills, bank statements, or other official documents issued within the last 3 months.

Փաստացի բնակության հասցեի հիմնավորում, օրինակ՝ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային հաշվի քաղվածք կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (3 ամսվա վաղեմության):

5. Employment contract and/or reference from the place of employment.

Աշխատանքային պայմանագիր և/կամ տեղեկանք աշխատանքի վայրից:

6. A certificate from the tax authority regarding taxes paid by the individual, or a bank account statement for the last 1 year.

Ֆիզիկական անձի կողմից վճարած հարկերի վերաբերյալ տեղեկանք հարկային մարմնից կամ վերջին 1 տարվա բանկային հաշվի քաղվածք:

7. TIN

ՀՎՀՀ/ ՀԾՀ

8. If an authorized representative is involved, the power of attorney and the identification document of the authorized individual shall also be submitted.

Լիազոր անձի առկայության դեպքում նաև լիազորագիրը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:

9. W-8BEN

**List of documents required for opening brokerage/depository accounts  
for RA resident individuals**

**Ուեզիդենտ ֆիզիկական անձանց բրոքերային/պահառուական հաշիվների  
բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**



Acceptable languages for document submission are Armenian, Russian, and English. Documents must be submitted in their original scanned versions. In the case of a non-resident company, the documents must be duly certified by a competent state authority to confirm their authenticity (notarization/apostille).

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ՝ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*



This list is not exhaustive or final. Upon receipt of the complete set of documents, our Anti-Money Laundering and Counter-Terrorist Financing (AML/CFT) team reserves the right to request additional documents and clarifications in accordance with applicable law.

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

| N  | Documents<br>Փաստաթղթեր                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
|----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. | “KYC” Questionnaire.<br>«Ճանաչիր Քո Հաճախորդին» հարցաթերթիկ                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
| 2. | Passport (ensuring that personal information, including the photo, number, and registration address, is clearly visible).<br>Անձը հաստատող փաստաթուղթ (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն):                                                                                                                                                                      |
| 3. | If dual citizenship is held, it is mandatory to provide the passport of the second citizenship, ensuring that personal details such as the photograph, passport number, and registered address are clearly visible.<br>Երկրորդ քաղաքացիության առկայության դեպքում՝ պարտադիր է երկրորդ քաղաքացիության անձնագրի ներկայացումը (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն): |
| 4. | Justification of the actual residential address— such as utility bills, bank statements, or other official documents issued within the last 3 months.<br>Փաստացի բնակության հասցեի հիմնավորում, օրինակ՝ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային հաշվի քաղվածք կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (3 ամսվա վաղեմության):                                                                                                     |
| 5. | Employment contract and/or reference from the place of employment (or bank statement for the previous year).<br>Աշխատանքային պայմանագիր և/կամ տեղեկանք աշխատանքի վայրից (կամ վերջին                                                                                                                                                                                                                                    |

1 տարվա բանկային հաշվի քաղվածք):

6. If an authorized representative is involved, the power of attorney and the identification document of the authorized individual shall also be submitted.

Լիազոր անձի առկայության դեպքում նաև լիազորագիրը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:

7. W-8BEN.

Перечень документов, необходимых для открытия брокерских/депозитарных  
счетов физическим лицам-нерезидентам

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բրոքերային/պահառուական հաշիվների  
բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

! • *Приемлемые языки подачи документов: армянский, русский и английский. Документы необходимо предоставить в оригинале и сканированном виде, если это нерезидентная компания, с государственным заверением, подтверждающим подлинность документов (нотариальное заверение/апостиль).*

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*

! • *Настоящий список не является исчерпывающим и окончательным перечнем требований. После получения полного пакета документов наша группа по противодействию отмыванию денежных средств и финансированию терроризма оставляет за собой право запросить дополнительные документы и разъяснения в соответствии с применимым законодательством.*

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| N   | Документы<br>Փաստաթղթեր                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
| 10. | Анкета «KYC» (ЗСК)<br>«Ճանաչիր Բո Հաճախորդին» հարցաթերթիկ                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
| 11. | Удостоверение личности (для граждан Российской Федерации — паспорт гражданина РФ и заграничный паспорт), при этом должны быть чётко видны персональные данные: фотография, номер документа и адрес регистрации.<br>Անձը հաստատող փաստաթուղթ (ՌԴ քաղաքացիների համար՝ ՌԴ քաղաքացու անձնագիր և արտաքին անձնագիր) (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն):    |
| 12. | При наличии второго гражданства необходимо предоставить паспорт, выданный в рамках второго гражданства, с отображением всех персональных данных, включая фотографию, номер документа и адрес регистрации.<br>Երկրորդ քաղաքացիության առկայության դեպքում՝ պարտադիր է երկրորդ քաղաքացիության անձնագրի ներկայացումը (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն): |

13. Документальное подтверждение фактического адреса проживания, например: квитанция за коммунальные услуги, банковская выписка либо иной официальный документ, выданный в течение последних трёх месяцев.  
Փաստացի բնակության հասցեի հիմնավորում, օրինակ՝ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային հաշվի քաղվածք կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (3 ամսվա վաղեմության):
14. Трудовой договор и/или справка с места работы, подтверждающая трудовую деятельность  
Աշխատանքային պայմանագիր և/կամ տեղեկանք աշխատանքի վայրից:
15. Справка из налогового органа о налогах, уплаченных физическим лицом (или выписка с банковского счёта за последний год).  
Ֆիզիկական անձի կողմից վճարած հարկերի վերաբերյալ տեղեկանք հարկային մարմնից (կամ վերջին 1 տարվա բանկային հաշվի քաղվածք):
16. ИНН  
ՀՎՀՀ/ ՀԾՀ
17. При наличии уполномоченного лица также подлежат представлению доверенность и удостоверяющий личность документ этого лица.  
Լիազոր անձի առկայության դեպքում նաև լիազորագիրը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:
18. W-8BEN.

**Перечень документов, необходимых для открытия брокерских/депозитарных  
счетов физическим лицам-резидентам РА**

**Ուեզիդենտ ֆիզիկական անձանց բրոքերային/պահառուական հաշիվների  
բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**



*Приемлемые языки подачи документов: армянский, русский и английский. Документы необходимо предоставить в оригинале и сканированном виде, если это нерезидентная компания, с государственным заверением, подтверждающим подлинность документов (нотариальное заверение/апостиль).*

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ՝ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*



Настоящий список не является исчерпывающим и окончательным перечнем требований. После получения полного пакета документов наша группа по противодействию отмыванию денежных средств и финансированию терроризма оставляет за собой право запросить дополнительные документы и разъяснения в соответствии с применимым законодательством.

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| N   | Документы<br>Փաստաթղթեր                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| 8.  | Анкета «KYC» (ЗСК)<br>«Ճանաչիր Քո Հաճախորդին» հարցաթերթիկ                                                                                                                                                                                                                                                                                             |
| 9.  | Паспорт (чтобы была видна личная информация, включая фото, номер и адрес регистрации).<br>Անձը հաստատող փաստաթուղթ (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն):                                                                                                                                        |
| 10. | При наличии второго гражданства необходимо предоставить паспорт, выданный в рамках второго гражданства, с отображением всех персональных данных, включая фотографию, номер документа и адрес регистрации.<br>Երկրորդ քաղաքացիության անձնագրի ներկայացումը (որպեսզի տեսանելի լինեն անձնական տվյալները, ներառյալ լուսանկարը, համարը և գրանցման հասցեն): |
| 11. | Документальное подтверждение фактического адреса проживания, например: квитанция за коммунальные услуги, банковская выписка либо иной официальный документ, выданный в течение последних трёх месяцев.<br>Փաստացի բնակության հասցեի հիմնավորում, օրինակ՝ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային հաշվի քաղվածք կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (3       |

ամսվա վաղեմության):

12. Трудовой договор и/или справка с места работы, подтверждающая трудовую деятельность (или выписка из банка за последний год).  
Աշխատանքային պայմանագիր և/կամ տեղեկանք աշխատանքի վայրից (կամ վերջին 1 տարվա բանկային հաշվի քաղվածք):
13. При наличии уполномоченного лица также подлежат представлению доверенность и удостоверяющий личность документ этого лица.  
Լիազոր անձի առկայության դեպքում նաև լիազորագիրը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:
14. W-8BEN.



**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգ**  
**Հավելված թիվ 2**

**List of documents required to be submitted by legal entities for the purpose of opening brokerage accounts**

**Բրոքերային հաշիվների բացման համար Իրավաբանական անձանց  
կողմից ներկայացման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**



Acceptable languages for document submission are Armenian, Russian, and English. Documents must be submitted in their original scanned versions. In the case of a non-resident company, the documents must be duly certified by a competent state authority to confirm their authenticity (notarization/apostille).

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ՝ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*



This list is not exhaustive or final. Upon receipt of the complete set of documents, our Anti-Money Laundering and Counter-Terrorist Financing (AML/CFT) team reserves the right to request additional documents and clarifications in accordance with applicable law.

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

| N  | Documents                                                                                                                                                                               |
|----|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|    | Փաստաթղթեր                                                                                                                                                                              |
| 1  | “KYC” Questionnaire.<br>«Ճանաչիր Քո Հաճախորդին» հարցաթերթիկ                                                                                                                             |
| 2. | The final version of the certificate/document evidencing state registration<br>Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի վերջնական տարբերակը                                                 |
| 3. | A document containing the Taxpayer Identification Number (TIN) or any other equivalent document reflecting the tax number<br>ՀՎՀՀ-ն կամ հարկային համարը ներառող այլ համարժեք փաստաթուղթ |
| 4. | The final version of the company's founding document (charter or articles of association)<br>Հիմնադիր փաստաթղթի (կանոնադրություն) վերջնական տարբերակը                                   |
| 5. | List of beneficial owners (20% or more) on company letterhead.<br>Իրական շահառուների (20% և ավելի) ցանկ՝ ընկերության բլանկի վրա:                                                        |

6. The list of natural persons who are authorized to represent the client without a power of attorney, as well as the documents evidencing their official appointment.  
Առանց լիազորագրի հաճախորդի անունից հանդես գալու իրավասություն ունեցող ֆիզիկական անձանց ցանկը և նրանց նշանակումը հավաստող փաստաթղթերը
7. Valid International Passport copies for Executive Directors and Beneficial Owners (certified true copies).  
Տնօրենների և իրական շահառուների անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ (նոտարացված)
8. Proof of address for the executive director and the beneficial owners must be provided, such as a utility bill, bank statement, or any other official document issued within the last three months.  
Տնօրենի և իրական շահառուների համար հասցեի ապացույց, օրինակ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային քաղվածք, կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (վերջին 3 ամսվա ընթացքում տրամադրված)
9. Signature Specimen  
Ստորագրության նմուշի ցանկ
10. The list of natural persons authorized to act on behalf of the client under a power of attorney, along with supporting documents or copies confirming the scope of their authority. An identification document of the authorized person must also be provided  
Հաճախորդի անունից լիազորագրի հիման վրա գործող լիազորված ֆիզիկական անձանց ցանկը և նրանց լիազորությունները հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը
11. Last year's financial report  
Վերջին տարվա ֆինանսական հաշվետվություն
12. W8-BEN-E.(եթե կիրառելի է/if applicable)

**Перечень документов, необходимых для открытия брокерских/депозитарных  
счетов юридического лица**

**Բրոքերային հաշիվների բացման համար Իրավաբանական անձանց  
կողմից ներկայացման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

**!** Приемлемые языки подачи документов: армянский, русский и английский. Документы необходимо предоставить в оригинале и сканированном виде, если это нерезидентная компания, с государственным заверением, подтверждающим подлинность документов (нотариальное заверение/апостиль).

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ՝ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական փավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*

**!** Настоящий список не является исчерпывающим и окончательным перечнем требований. После получения полного пакета документов наша группа по противодействию отмыванию денежных средств и финансированию терроризма оставляет за собой право запросить дополнительные документы и разъяснения в соответствии с применимым законодательством.

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

|    |                                                                                              |
|----|----------------------------------------------------------------------------------------------|
| N  | Документы                                                                                    |
|    | Փաստաթղթեր                                                                                   |
| 1  | Анкета «KYC» («ЗСК»).                                                                        |
|    | «Ճանաչիր Բո Հաճախորդին» հարցաթերթիկ:                                                         |
| 2. | Финальная версия документа, удостоверяющего государственную регистрацию юридического лица.   |
|    | Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի վերջնական տարբերակը:                                    |
| 3. | Свидетельство о ИНН или иной документ, содержащий идентификационный номер налогоплательщика. |
|    | ՀՎՀՀ-ն կամ հարկային համարը ներառող այլ համարժեք փաստաթուղթ:                                  |
| 4. | Финальная версия учредительного документа (устава юридического лица).                        |
|    | Հիմնադիր փաստաթղթի (կանոնադրություն) վերջնական տարբերակը:                                    |
| 5. | Список реальных бенефициаров (20% и более) на бланке компании.                               |
|    | Իրական շահառուների (20% և ավելի) ցանկ՝ ընկերության բլանկի վրա:                               |

6. Документ, подтверждающий факт назначения лиц, имеющих право действовать от имени юридического лица, без доверенности.  
Առանց լիազորագրի հաճախորդի անունից հանդես գալու իրավասություն ունեցող ֆիզիկական անձանց ցանկը և նրանց նշանակումը հավաստող փաստաթղթերը:
7. Документы, удостоверяющие личность директора и бенефициарных владельцев.  
Տնօրենի և իրական շահառուների անձը հաստատող փաստաթղթերը:
8. Документы, подтверждающие адрес места жительства директора и бенефициарных владельцев (например, коммунальные квитанции, банковская выписка или иной официальный документ, выданный не ранее чем за последние 3 месяца).  
Տնօրենի և իրական շահառուների համար հասցեի ապացույց, օրինակ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային քաղվածք, կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (վերջին 3 ամսվա ընթացքում տրամադրված):
9. Перечень образцов подписей уполномоченных лиц.  
Ստորագրության նմուշի ցանկ:
10. Список уполномоченных лиц, действующих от имени клиента на основании доверенности и копии доверенности. Документ, удостоверяющий личность уполномоченного лица.  
Հաճախորդի անունից լիազորագրի հիման վրա գործող լիազորված ֆիզիկական անձանց ցանկը և նրանց լիազորությունները հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:
11. Финансовая отчётность за предыдущий отчетный год.  
Վերջին տարվա ֆինանսական հաշվետվություն:
12. W8-BEN-E (եթե կիրառելի է/ если применимо).

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգ  
Հավելված թիվ 3**

**List of documents required to complete the KYC process of  
Financial Institution**

**Ֆինանսական հաստատության KYC գործընթացն իրականացնելու  
համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

! Acceptable languages for document submission are Armenian, Russian, and English. Documents must be submitted in their original scanned versions. In the case of a non-resident company, the documents must be duly certified by a competent state authority to confirm their authenticity (notarization/apostille).

*Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ՝ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):*

! This list is not exhaustive or final. Upon receipt of the complete set of documents, our Anti-Money Laundering and Counter-Terrorist Financing (AML/CFT) team reserves the right to request additional documents and clarifications in accordance with applicable law.

*Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:*

|    |                                                                                                                                                                                          |
|----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| N  | Documents<br>Փաստաթղթեր                                                                                                                                                                  |
| 1  | “KYC” Questionnaire.<br>«Ճանաչիր Քո Հաճախորդին» հարցաթերթիկ:                                                                                                                             |
| 2. | The final version of the certificate/document evidencing state registration<br>Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի վերջնական տարբերակը:                                                 |
| 3. | A document containing the Taxpayer Identification Number (TIN) or any other equivalent document reflecting the tax number<br>ՀՎՀՀ-ն կամ հարկային համարը ներառող այլ համարժեք փաստաթուղթ: |
| 4. | The final version of the company's founding document (charter or articles of association)<br>Հիմնադիր փաստաթղթի (կանոնադրություն) վերջնական տարբերակը:                                   |
| 5. | License.<br>Լիցենզիա:                                                                                                                                                                    |

6. List of beneficial owners (20% or more) on company letterhead.  
Իրական շահառուների (20% և ավելի) ցանկ՝ ընկերության բլանկի վրա
7. The company's internal organizational structure, signed by the beneficial owner or director.  
Ընկերության ներքին կազմակերպական կառուցվածքը ստորագրված Իրական շահառուի կամ Տնօրենի կողմից:
8. List of Directors.  
Ղեկավարումն իրականացնող անձանց (տնօրենների) ցանկ:
9. A protocol (decision) on the appointment of a director(s) of the Company/  
Ընկերության տնօրեն(ներ)ի նշանակման մասին արձանագրություն (որոշում):
10. Identity documents of the Director (executive body) and the ultimate beneficial owners (UBOs)  
Տնօրենի և իրական շահառուների անձը հաստատող փաստաթղթերը:
11. Proof of address for the executive director and the beneficial owners must be provided, such as a utility bill, bank statement, or any other official document issued within the last three months.  
Տնօրենի և իրական շահառուների համար հասցեի ապացույց, օրինակ կոմունալ վճարումների կտրոններ, բանկային քաղվածք, կամ այլ պաշտոնական փաստաթուղթ (վերջին 3 ամսվա ընթացքում տրամադրված):
12. List of Authorized Signatories with Signature Specimen.  
Ստորագրության նմուշի ցանկ:
13. The list of natural persons authorized to act on behalf of the client under a power of attorney, along with supporting documents or copies confirming the scope of their authority. An identification document of the authorized person must also be provided.  
Հաճախորդի անունից լիազորագրի հիման վրա գործող լիազորված ֆիզիկական անձանց ցանկը և նրանց լիազորությունները հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:
14. Audited financial statements for the last 3 years.  
Աուդիտորական եզրակացությամբ ֆինանսական հաշվետվություն՝ վերջին 3 տարվա համար:
15. Good Standing Certificate (issued within the past 3 months).  
Բարի համբավի վերաբերյալ տեղեկանք (տրամադրված վերջին 3 ամիսների ընթացքում):
16. Wolfsberg AML Questionnaire v1.4.
17. AML/CFT Policy (a valid and signed version must be provided)  
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականություն (անհրաժեշտ է տրամադրել վավեր և ստորագրված տարբերակով):
18. W-8BEN-E.

19. SSIs (Standard Settlement Instructions).  
Ստանդարտ հաշվարկային ռեկվիզիտներ (SSI):
20. List of Authorized Traders.  
Լիազորված թրեյդերների ցանկը:

**Список необходимых документов для процесса KYC для  
финансового учреждения**

**Ֆինանսական հաստատության KYC գործընթացն իրականացնելու  
համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

**!** Приемлемые языки подачи документов: армянский, русский и английский. Документы необходимо предоставить в оригинале и сканированном виде, если это нерезидентная компания, с государственным заверением, подтверждающим подлинность документов (нотариальное заверение/апостиль).

Փաստաթղթերի ներկայացման ընդունելի լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Պետք է տրամադրվեն բնօրինակ սկանավորված տարբերակով, եթե ոչ՝ ռեզիդենտ ընկերություն է՝ փաստաթղթերի իսկությունը հաստատող պետական վավերացմամբ (նոտարական հաստատում/ապոստիլ):

**!** Настоящий список не является исчерпывающим и окончательным перечнем требований. После получения полного пакета документов наша группа по противодействию отмыванию денежных средств и финансированию терроризма оставляет за собой право запросить дополнительные документы и разъяснения в соответствии с применимым законодательством.

Նշված ցանկը չի հանդիսանում պահաջվող փաստաթղթերի վերջնական ցուցակ: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո մեր ՆԴՄ թիմը կարող է պահանջել որոշ լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

|    |                                                                                                                                                             |
|----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| N  | Документы<br>Փաստաթղթեր                                                                                                                                     |
| 1  | Анкета «KYC» («ЗСК»).                                                                                                                                       |
|    | «Ճանաչիր Բո Հաճախորդին» հարցաթերթիկ:                                                                                                                        |
| 2. | Финальная версия документа, удостоверяющего государственную регистрацию юридического лица<br>Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի վերջնական տարբերակը:      |
| 3. | Свидетельство о ИНН или иной документ, содержащий идентификационный номер налогоплательщика.<br>ՀՎՀՀ-ն կամ հարկային համարը ներառող այլ համարժեք փաստաթուղթ: |
| 4. | Финальная версия учредительного документа (устава юридического лица)<br>Հիմնադիր փաստաթղթի (կանոնադրություն) վերջնական տարբերակը:                           |
| 5. | Лицензия.<br>Լիցենզիա:                                                                                                                                      |



6. Список реальных бенефициаров (20% и более) на бланке компании.  
Իրական շահառուների (20% և ավելի) ցանկ՝ ընկերության բլանկի վրա:
7. Внутренняя организационная структура компании, подписанная бенефициарным владельцем или директором.  
Ընկերության ներքին կազմակերպական կառուցվածքը ստորագրված Իրական շահառուի կամ Տնօրենի կողմից:
8. Список директоров.  
Ղեկավարումն իրականացնող անձանց (տնօրենների) ցանկ:
9. Протокол (решение) о назначении генерального директора(ов) компании.  
Ընկերության տնօրեն(ներ)ի նշանակման մասին արձանագրություն (որոշում):
